ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացումը խաղի միջոցով

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Ազատուհի Խաչատրյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒսուբ բեկի (Թեմուրյանցի) անվան հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- էջ 3

Բառակազմության ուսուցման ձևերն ու մեթոդները տարրական դպրոցում խաղի միջոցով ---------- էջ 5

Բառակազմության ուսուցումը ---------- էջ 6

Տարրական դասարաններում աշակերտի բառապաշարի հարստացման ձևերը------ էջ 11

Օրվա Դասի պլան---------- էջ20

Եզրակացություն ---------- էջ 22

Գրականության ցանկ---------- էջ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համար առաջատար գործունեություն արդեն սկսվում է դառնալ ուսում: Խաղը ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է իր համար էլ աննկատելիորեն ընդգրկել ակտիվ ուսուցման և նույնիսկ այս կամ այն պրոբլեմի լուծման ընթացքի մեջ: Խազի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում տարվելով հետաքրքրաշարժությամբ, և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը: Այսպիսով , խաղի միոցով ոչ միայն ուսուցանվում և ամրապնդվում է դասանյութը , այլև այն օգնում է որ աշակերտն աննկատ ձևով կարողանա հաղթահարել բարդ ուսումնական խնդիրները: Հաշվի առնելով սովորողների, հատկապես փոքր տարիքի, համեմատաբար արագ հոգնածությունը, ուշադրությունը շեղող գործոնները մանկավարժները խորհուրդ են տալիս փոխել աշխատանքի մոտեցումը և կիրառել մեթոդների բազմազանություն: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը:Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունը , անհատականությունը առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղով է երեխան ճանաչում երևույթի շատ կողմեր, որոնք ի հայտ են գալիս միայն խաղային իրավիճակում:
Որպեսզի կարողանանք սովորողներին ներգրավել դասի մեջ, պետք է կիրառել հետաքրքրաշարժ ու ուշադրությունը զարգացնող խաղեր, : Տրամաբանական և հետաքրքրաշարժ խաղերը հետաքրքրում են երեխաներին:

Արդի համաշխարհային զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգի վրա՝ ստեղծելով գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագություն, բարձր տեխնոլոգիաների ինտենսիվ ներդրում,ազգային տնտեսության անշեղ զարգացում՝ պահանջելով համապատասխան բարեփոխումներ նաև կրթական գործընթացում:

Թեմայի արդիականությունը:Երեխայի խոսքի զարգացումը եղել և մնում է մայրենի լեզվի գերագույն նպատակներից մեկը: Այն մայրենի լեզվի ուսուցման տարրական օղակի հիմանական նպատակներից մեկն է: Իսկ խոսքի զարգացման բաղադրիչներն են բառապաշարի հարստացումը և կապակցված խոսք կառուցելու կարողությունները: Առանց հարուստ ու գործուն բառապաշարի չի կարող լինել գեղեցիկ, պատկերավոր ու դիպուկ խոսք: Ահա թե ինչու ընտրված թեման միշտ էլ արդիական է:

Հետազոտության նպատակը տարրական դպրոցում բառակազմության ուսուցումը խաղի միջոցով սովորողների բառապաշարի հարստացման և այդ հիման վրա խոսքի զարգացման գործընթացի արդյունավետ մեթոդների և դրանց կիրառման հնարների բացահայտումն է:

Հետազոտության օբյեկտը տարրական դասարաններում սովորողների բառապաշարի հարստացման գործընթացի արդյունավետությունն ապահովող մեթոդական համակարգն է:

Հետազոտության առարկան տարրական դասարաններում բառակազմության ուսուցման գործընթացն է՝ աշակերտների բառապաշարի հարստացմանը նպաստող հնարավորություններով:

- **Հետազոտության խնդիրներն են՝** բացահայտել խաղի միջոցով բառակազմության ուսուցման տեղն ու դերը բառապաշարի հարստացման գործընթացում, մասնավորապես՝ կրտսեր դպրոցի երկրորդ դասարանում բառակազմական գիտելիքների ուսուցման հնարավորությունները, առանձնահատկություններն ու ծավալը. վեր հանել բառակազմական վերլուծության և բառակազմական կաղապարների կիրառման դերը բառապաշարի հարստացման գործումբացահայտել բառակազմական բաղադրիչների միջոցով բառիմաստի բացատրության դերը բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման գործընթացում:
- Օրինակներով ցույց տալ, որ վերլուծություններն ու դասագրքում եղած բառակազմական վարժությունները երեխաներին օգնում են արդեն սովորած լեզվական նյութերը ամրապնդել և սովորածը գործնականում կիրառել:

Հետազոտության մեջ կիրառել ենք հետևյալ մեթոդները. դիտման և զրույցի, որոնք կնպաստեն կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանն ու խոսքի զարգացմանը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության մեջ կատարված տեսական և գործնական վերլուծությունները, դասակարգումները կարող են նպաստել կրտսեր դպրոցում մայրենի լեզվի դասերին բառապաշարի հարստացման գործընթացն առավել արդյունավետ և բազմազան կազմակերպելու

Ոչինչ,ոչ մեր խոսքերը, ոչ մտքերը, ոչ էլ նույնիսկ մեր գործողություններն այնքան հստակ և հավատարմորեն չեն արտահայտում ինքներս մեզ և մեր հարաբերությունն աշխարհի հետ, որքան մեր զգացմունքները. նրանք լսում են ոչ թե առանձին մտքի, ոչ թե առանձին որոշման, այլ մեր հոգու ամբողջ բովանդակությունը և կառուցելով այն : (Կ. Դ. Ուշինսկի)
Ուշադրությունը, որպես համակարգված վարժություն, զարգացնում է երեւակայությունը, այն դառնում է ավելի ճկուն եւ շարժական:
(Չեխով Միխայիլ Ալեքսանդրովիչ)
Ուշադրությունը օգնում է նկատել իրականությունը «այստեղ եւ հիմա»:
(Ռուբեստեյն Նինա Վալենտինովնա)
Հոգեբանական երեւույթների համակարգում ուշադրությունը գրավում է հատուկ պաշտոն: Այն ընդգրկված է բոլոր մյուս հոգեբանական գործընթացներում, գործում է որպես դրանց անհրաժեշտ տարր:
(Սոլոմին Վալերի Պավլովիչ)
Ուշադրությունն ամեն ժամ է, ամեն րոպե հազարավոր արտաքին խթաններ բարձրանում են մեր աչքերն ու ականջները, հեղեղում են մեր ուղեղը:
(Կեյվին Դուտտոն)

Ինչքան քիչ է ուշադրության օբյեկտների քանակը, ինչպես նաև ընկալման մակերեսը, այնքան կենտրոնացված է ուշադրությունը: Այն ապահովում է ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների խորին ուսումնասիրում: Ուշադրության կենտրոնացումը կապված է կեղևում գրգռման դոմինանտ օջախի գործառնության առանձնահատկությունների հետ. կենտրոնացումը դոմինանտ օջախում գրգռման արդյունք է գլխուղեղի կեղևի մյուս շրջանների միաժամանակյա արգելակման դեպքում:

(Ալեքսեյ Ուխտոմսկի)
Ուշադրության էությունըբանականության այս կամ այն օբյեկտի տիրապետումն է կամ մտքերի ուղղվածությունը, գիտակցության կենտրոնացումը և ֆոկուսավորումը: Այն պահանջում է այլ առարկաներից հեռացում մյուսների հետ առավել արդյունավետ փոխազդելու համար: Ստացվում է, որ ուշադրության առաջին գործառույթը որոշակի տպավորությունների, մտքերի կամ առարկաների վրա ֆոկուսավորումն է և շեղումն այլ՝ տվյալ պահին ;

Բառակազմության ուսուցման ձևերն ու մեթոդները տարրական դպրոցում խաղի միջոցով

Ուսուցումը երկկողմանի աշխատանք է՝ ուսուցչի սովորեցնելը և աշակերտի սովորելը: Ուստի ուսուցման մեթոդներն էլ ելնում են այս առանձնահատկությունից: Բառակազմության ուսուցումը տարրական դպրոցում իրականացվում է վերլուծական-համադրական մեթոդով, համաձայն որի՝ լեզվական տարբեր թեմաների ուսուցման ժամանակ վերլուծվում են լեզվի մեջ գոյություն ունեցող բազմաթիվ ու բազմաբնույթ երևույթները, դիտարկվում են դրանց առանձնահատկությունները, բացահայտվում են բառի, նրա կազմության, կրած փոփոխությունների օրինաչափությունները, նախադասության մեջ և խոսքում ունեցած դերը, ապա ամփոփում և ամբողջացնում են կատարած դիտարկումները:Վերլուծությունը մտավոր աշխատանք է, զարգացնում է աշակերտի մտածողությունը: Յուրաքանչյուր վերլուծության պիտի հաջորդի գործնական աշխատանք, որի ընթացքում աշակերտը պիտի խոսքի մեջ կիրառի իր սովորածը :Վերլուծությունը կատարվում է համադրության հետ միասին, միայն վերլուծությամբ աշակերտը չի կարող մտահանգման հասնել, ուստի նա պիտի կատարի վերլուծական-համադրական վարժություններ. սրանցով են հարստանում աշակերտի տեսական ու գործնական գիտելիքները: Վերլուծության օրինակը պետք է վերցնել գեղարվեստական գրականությունից, ժողովրդական աֆորիզմներց, առածներից, թևավոր խոսքերից: Այն պիտի ոչ միայն բառակազմության մասին գիտելիքներ հաղորդի, այլև կրթի աշակերտի հոգին, դաստիարակի նրան մարդասիրական, հայրենասիրական զգացումներով, ճաշակ զարգացնի գեղեցիկ խոսքի նկատմամբ: Վերլուծության միջոցով աշակերտը ճանաչում է բառի կազմությունը, սովորում բառակազմության ձևերը, բաղադրիչներով նոր բառեր կազմելու վարժությամբ հմտանում է բառեր կազմելու մեջ, իսկ այդ բառերով նախադասություններ կազմելով, շարադրություն գրելով՝ հարստացնում է իր

բառապաշարը: Վերլուծական-համադրական մեթոդը նպաստում է աշակերտների մտածողական ակտիվության բարձրացմանը. աշակերտները լեզվական նյութը կընկալեն ոչ թե մեխանիկորեն, այլ տարաբնույթ տրամաբանական-մտածողական գործունեության ճանապարհով: Բառակազմական գիտելիքների ձեռքբերման գործընթացում աշակերտը վերլուծություն է կատարում, համեմատում է ուսումնասիրվող երևույթների և առարկաների ու գործողությունների անվանումները, դրանց միջև գտնում է ընդհանրություններ, տարբերություններ և որոշակի եզրակացությունների է հանգում, կատարում է պարզ դատողություններ:

Բառակազմության ուսուցումը

Բառակազմություն բառը, որպես լեզվաբանական տերմին գերծածվում է երկու իմաստով: Առաջին իմաստով նշանակում է լեզվաբանության այն բաժինը, որն զբաղվում է բառերի կառուցվածքի, բառերի կազմության օրենքների և կանոնների, լեզվի բառակազմական համակարգի քննությամբ: Մյուս իմաստով բառակազմությունը նոր բառերի կազմության գործընթացն է, լեզվի բառակազմական օրենքներով նոր բառերի կազմումը:

Բառերը կարելի է վերլուծել, բաղադրիչների բաժանել. օրինակ՝ հյուրասիրություններից բառը կարող ենք բաժանել հյուր-ա-սիր-ություն-ներ-ից, բանաստեղծություն-ը՝ բան-ա-ստեղծ-ություն, գրադարանավարական-ը՝ գր-ա-դարան-ա-վար-ական, վերադասավորում-ը՝ վեր-ա դաս-ա-վոր-ում, հեռագրասյուն-ը՝ հեռ-ա-գր-ա-սյուն, արտասանել-ը՝ արտ-աս-ան-ել, կերոսականորեն-ը՝ հերոս-ական-որեն բաղադրիչների: Բառերի վերլուծումը բաղադրիչների պարզում է բառերի կազմը, ցույց տալիս, թե ինչ միավորներից են կազմված բառերը և դրանց տվյալ ձևերը: Եթե այդ բաղադրիչները վերցնենք առանձին-առանձին, անկախ տվյալ բառերից, օրինակ՝ բան, ստեղծ, դարան, ավոր, ություն և այլն, կտեսնենք, որ դրանք բոլորն էլ որոշ իմաս ունեն, իսկ այդ բաղադրիչներից որևէ հնչյուն հեռացնելու դեպքում դրանք կամ բոլորովին կզրկվեն իմաստից, կամ էլ մի ուրիշ իմաստ կունենան: Նշանակում է բառը բաղադրիչների բաժանելով մենք ոչ միայն պարզում ենք բառի կազմը, այլև ստանում ենք այնպիսի միավորներ, որոնք այլևս կազմությամբ վերլուծելի, բաժանելի չեն և տվյալ հնչյունակազմով ու տվյալ իմաստով լեզվական անբաժանելի միավորներ են: Այդ միավորները մեկական հնչյուններ են կամ մեկից ավելի հնչյունների կապակցություններ, որոնք արտահայտում են որոշ իմաստ:

Բառի կազմության մասին երեխաների ունեցած գիտելիքներն կարևոր են, որովհետև դրանք բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն են: Բառակազմությունից աշակերտների ձեռք բերած գիտելիքները միաժամանակ նպաստում են շրջապատող իրականության մասին նրանց ունեցած տեղեկությունների հարստացմանը, առարկաների, գործընթացների, երևույթների կապերի մասին աշակերտների պատկերացումների խորացմանը: Կարևոր է ոչ միայն ձգտել, որ աշակերտները հասկանան բառիմաստը, այլև զարգացնել խոսքում բառը հասկանալով օգտագործելու նրանց ձեռք բերած

ունակությունը: Բառակազմության ուղղությամբ գործնական ունակությունների ձևավորումը նպաստում է նաև ուղղագրական կարողությունների մշակմանն ու դրանց հմտությունների վերածմանը: Հայտնի է, որ հայերենի ուղղագրության ուսուցման առաջատար սկզբունքը սովորողների կողմից ձևութաբանական հիմքի գիտակցումն է: Այդ պատճառով էլ ուսուցիչը ուղղագրական կարողությունների մշակման ուղղությամբ աշխատանքները պետք է առաջին հերթին իրականացնի՝ սկսելով բառարմատների ուղղագրության ուսուցումից:

Բառակազմական գիտելիքներն ուսուցանելիս պետք է նկատի ունենալ, որ բառի մեջ եղած բոլոր բաղադրիչները փոխադարձաբար կապված են, և յուրաքանչյուր բաղադրիչի իմաստ բացահայտվում է միայն տվյալ բառի մեջ: Այդ պատճառով էլ տարրական դասարաններում արմատի և ածանցի մասին նախնական գիտելիքներն ուսուցանվում են փոխկապակցության մեջ և քայլ առ քայլ:

- Առաջին քայլ, նախապատրաստական ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են նույնարմատ բառերի շուրջ կատարվող աստիճանաբար բարդացող վարժությունների ճանապարհով:
- Երկրորդ քայլ, երեխաները համեմատությունների և վերլուծությունների միջոցով որոշում են նույնարմատ բառերի և արմատի առանձնահատկությունները:
- Երրորդ քայլ, բառի մեջ արմատի դերի և նրա առանձնահատկությունների, արմատի և ածանցի՝ ուղղագրության և բառակազմության միջև գոյություն ունեցող կապի, բառերի ուղղագրության ուսումնասիրում:
- Չորրորդ քայլ, բառի ձևույթաբանական կառուցվածքի մասին երեխաների ունեցած գիտելիքների ընդլայնում, խորացում, ամրակայում, բառակազմական ունակությունների զարգացում, հոլովական վերջավորությունների ուղղագրության յուրացում, բայի ժամանակային և եղանակային վերջավորությունների իմաստների գիտակցում և ուղղագրական կարողությունների ամրակայում:

Ներկայացնենք այս քայլերի ընթացքում իրականացվող աշխատանքների մեթոդիկան: Բառակազմական նախապատրաստական ուսումնասիրություններն իրականացվում են լեզվական վարժությունների կատարման ճանապարհով՝ երեխաներին նախապատրաստելու համար նույնարմատ բառերի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունների, դրանց փոխկապակցության ընկալմանը: Սակայն նույնարմատ բառերի ուսումնասիրման առաջին փուլում աշակերտները հաճախ այդպիսիք են համարում միայն այն բառերը, որոնք առարկայորեն նույնանուն են (տուն-տնակ, ձուկ-ձկնիկ, շուն-շնիկ, նավ-նավակ), և նույնարմատ չեն համարում այնպիսի բառերը, ինչպիսիք են, օրինակ՝ անտառ-անտառապահ, ձյուն- ձնեմարդ և այլն: Նրանք մասնավորապես դժվարանում են նույնարմատություն տեսնել ածանցավոր բառերի մեջ: Այս դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է վարժություններ կատարել բառակազմական տարբեր օրինաչափությունների շուրջ լեզվական իրողությունները ներկայացնելով պարզից դեպի բարդը գնացող սկզբունքով: Որպեսզի երեխաներն ըմբռնեն նույնարմատ բառերի միջև գոյություն ունեցող իմաստային տարբերություններն ու ընդհանրությունները, շահեկան է դրանք դիտարկել իբրև առանձին բառեր՝ առաջարկել երեխաներին դրանք օգտագործել նախադասության մեջ և կապակցված բնագրում:

Նույնարմատ բառերի ճիշտ որոշման և դրանց իմաստային նրբերանգների ընկալման կարողության ձևավորման նպատակով արդյունավետ է նկարներով կամ համապատասխան առարկաներով աշխատանքը։ Օրինակ՝ կարելի է ցուցադրել մեծ տան և փոքր տան, մեծ ձկան և փոքր ձկան, ծաղկի և ծաղկամանի, ձյան և ձնեմարդի և նման այլ նկարներ ու առաջարկել սեղանին դասավորած բառերն ընտրել և փակցնել բառիմաստին հարմար նկարի տակ։ Այսպիսի վարժությունից հետո աշակերտների համար ակնհայտ կդառնա ոչ միայն որոշ բառերի՝ նույն ծագումն ունենալու հանգամանքը, այլև դրանց իմաստային տարբերությունները:

Աշակերտները դիտում են այդ շարքերը և ինքնուրույն որոշում, թե յուրաքանչյուր շարքում բառերի ո՞ր մասն է կրկնվում և ընդգծում են այդ մասը: Ապա որոշում՝ թե ո՞ր իմաստն է յուրաքանչյուր շարքում ընդհանուր. առաջին շարքում՝ մեծ, երկրորդում՝ գիր, երրորդում՝ ժամ, իսկ չորրորդում՝ օրինակ: Այս վերլուծությունից հետո բացատրում ենք, որ այդ շարքերի ընդգծված մասերը արմատներ են: Այնուհետև աշակերտների միջոցով տրված բառերը վերլուծում ենք բաղադրիչների՝

մեծ-ա-գույն մաքր-ա-գր-ություն արտ-ա-ժամ-յա տար-օրինակ

մեծ-ա-քանակ արտ-ա-գրել ժամ-անակ ան-օրինակ

մեծ-ություն ձեռ-ա-գիր ժամ-ա-ցույց օրինակ-ելի

մեծ-ա-վոր գր-ական ժամ-ա-տախտակ յուր-օրինակ

ամենա-մեծ հեռ-ա-գիր ան-ժամ-անակ նույն-օրինակ

մեծ-ա-գին գր-ավոր ժամ-անակ-ավոր օրինակ-իչ

մեծ-ական ան-գր-ա-գետ ժամ-կոչ ինքն-օրինակ

Այս բաժանումից հետո աշակերտները հասկանում են, որ առանձնացված բաղադրիչները այլևս հնարավոր չէ բաժանել մասերի: Եթե առանձնացված բաղադրիչները բաժանենք մասերի, կզրկվեն իմաստից, կստացվեն իմաստազուրկ հնչյուններ: Եթե մեծ-ը իմաստ ունի, ապա մ, ե, ծ հնչյունները իմաստ չունեն, գիր-ը իմաստ ունի, իսկ գ, ի, ր հնչյունները իմաստ չունեն: Նշանակում է, արմատը բառի այն մասն է, որն այլևս բաղադրիչների չի վերածվում, եթե վերածենք, կզրկվի իմաստից: Դրանից հետո աշակերտների ուշադրությունը պետք է սևեռել երկրորդ շարքի ընդգծված արմատների վրա, որպեսզի նրանք համեմատեն ու որոշեն նրանց կազմության տարբերությունը. օրինակ թե ինչ տարբերություն կա գիր և գր արմատների միջև: Աշակերտների համար դժվար չէ կռահել, որ երկրորդը (գր) առաջինի (գիր) հնչյունափոխված ձևն է: Այսինքն, արմատը կարող է հանդես գալ՝ հնչյունափոխված և չհնչյունափոխված: Այս ամենի մեկնաբանումից հետո կարելի է կատարել հետևյալ վարժությունները:

1. Ջուր արմատով կազմել բառերի երկու շարք՝ առաջինում անհնչյունափոխ ձևով, երկրորդում՝ հնչյունափոխ: Օրինակ՝ անջուր, քաղցրաջուր, սապնաջուր,

հանքաջուր, ջովաջուր, մաքրաջուր և՝ ջրառատ, ջրակայան, անջրանցիկ, ջրաղաց, ջրցան, ջրամբար, ջրտուն: Շարքերը կազմելուց հետո աշակերտները ընդգծում են արմատները:

2. Կարելի է գրատախտակի մեջտեղում գրել տալ մի արմատ և նրա չորս կողմից մասեր ավելացնելով՝ կազմել նոր բառեր: Օրինակ՝

Ներքնա ակ

Ցախա ային

խմբագրա տուն

մեծա ավարի

վերնա տեսություն

Արմատի մասին որոշակի գիտելիքների ուսուցումից հետո, աշակերտներին ծանոթացնում ենք բառի հաջորդ բաղադրիչին՝ ածանցին: Ածանցի ուսուցումը ևս շահեկան է սկսել նույնարմատ բառերի ուսումնասիրումից, մասնատումից: Բառից արմատի առանձնացումից հետո մնացած մասերի դիտարկումը և համադրումը երեխաներին բերում են այն եզրակացության, որ դրանք, ավելանալով բառի վրա, փոխում են բառի իմաստը, նոր իմաստ են տալիս արմատին: Ածանցի բացատրությունը կարելի է սկսել օրինակներից՝ գրելով՝ արտագրել, անգույն, աշակերտական, քաղաքային, ամանեղեն, դժգոհ, ընդգծել, ուրախություն, դարբնոց, գծավոր, ապա որոշել արմատները: Արմատները գտնելուց հետո ընդգծելուց մնացած մասերը, որից հետո բացատրվում է ածանցի նշանակությունը: Գրատախտակին գրում ենք պարզ բառեր և զուգահեռ՝ նրանց ածանցավոր ձևերը.

գրել -արտագրել

աշակաերտ- աշակերտական

գոհ-դժգոհ

դարբին- դարբնոց

գծել- ընդգծել

ուրախ- ուրախություն

գույն- անգույն

Ապա պահանջվում է աշակերտներից գտնել բառերի տարբերությունը, թե ինչ փոփոխություն է կրում բառը, երբ նրա վրա ածանց է ավելանում: Աշակերտները մեկ առ մեկ ուսումնասիրում են տրված բառերը և բացատրում այդ փոփոխությունները: Հետո տրվում է ածանցի սահմանումը՝ այն մասնիկը, որն ավելանալով բառի վրա՝ փոխում է նրա իմաստը, նոր բառ է կազմում, կոչվում է ածանց: Աշակերտները դիտում են ածանցները և որոշում, թե նրանք բառի որ կողմից են ավելացել և եզրակացություն անում: Նրանց համար դժվար չէ նկատել, որ ածանցները կարող են ավելանալ բառի թե՛ սկզբում, թե՛ վերջում: Բառի սկզբում ավելացող ածանցը կոչվում է նախածանց, իսկ բառի վերջում

ավելացողը՝ վերջածանց: Այնուհետե մարզողական, ամրակայող և տարաբնույթ այլ վարժությունների միջոցով գործնական աշխատանք է տարվում բառի մեջ արմատների և ածանցների որոշման, տրված արմատներով և ածանցներով նոր բառեր կազմելու կարողությունների ձևավորման և ամրակայման ուղղությամբ: Այս գործընթացը նպաստում է ոչ միայն հետագայում ձևաբանական գիտելիքների ձեռքբերմանը, այլև աշակերտների լեզվամտածողության զարգացմանը, վերլուծելու-համադրելու կարողությունների ձևավորմանը: Օրինակ՝ աշակերտներին տրվում են ածանցավոր բառեր և առաջարկվում ընտրել նախածանցներն ու վերջածանցները և գրել առանձին-առանձին: Օրինակ՝ գյուղական, դաշտային, արտասահման, ապուշ, համահայաստանյան, ստորջրյա, անտուն, վերադարձ, թևավոր, գերագույն, վարիչ, մատնոց: Կստացվեն նախածանցներ՝ արտ, ստոր, ան, վեր, գեր, ապ. վերջածանցներ ՝ ական, ային, յան, ավոր, իչ, ոց, յա, ստան: Կամ տրվում են նախածանցներ և վերջածանցներ և առաջարկվում այդ ածանցներով նոր բառեր կազմել և այլն:

Բառակազմական կաղապարները որպես բառաստեղծման միջոց

<<Բառակազմություն>> թեման ուսուցանվում է երկրորդ դասարանում. Այն հետապնդում է ոչ միայն լեզվական գիտելիքների ուսուցման, ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների հայտնաբերման, այլև բառակազմական միջոցների յուրացման և այդ հիմքի վրա նորանոր բառեր կազմելու և բառապաշարը հարստացնելու նպատակ: Այդ բառաստեղծումը հնարավորություն է ընձեռում երեխաներին իրենց իմացած արմատների շրջանակներում կազմելու նոր բառեր, որի շնորհիվ նրանց համեմատաբար սահմանափակ բառապաշարը միանգամից բազմապատկվում է: Բառակազմության եղանակները յուրացնելով՝ երեխաներն ավելի գիտակցորեն են օգտագործում իրենց իմացած բառերը՝ դրանք տարբեր կապակցությունների մեջ դնելով և բոլորովին նոր բառեր ստանալով: Բառակազմություն թեման ուսուցանելուն և բառապաշարը հարստացնելուն շատ է օգնում<<Կազմիր ազգակից բառեր >> խաղը:



Երկրորդ դասարանի աշակերտներին արմատ, ածանց, ածանցավոր բառեր, նախածանց և վերջածանց հասկացություններին ծանոթացնելուց և գործնական կարողություններ ձևավորելուց հետո, մատուցվում են ածանցավոր և բարդ բառերի կազմության կաղապարները:

Ածանցավոր բառերը կազմվում են հետևյալ կաղապարներով՝

ԱՐՄԱՏ + ԱԾԱՆՑ

Խնձոր ենի

ԱԾԱՆՑ + ԱՐՄԱՏ

դժ գույն

ԱԾԱՆՑ + ԱՐՄԱՏ + ԱԾԱՆՑ

Ան կարգ ություն

Այս կաղապարները բացատրելուն և սովորեցնելուն զուգընթաց՝ կատարվում են համապատասխան վարժություններ, որպեսզի ձեռք բերված գիտելիքները վերածվեն կարողությունների ու հմտությունների: Վարժությունները լինում են համադրական և վերլուծական: Համադրական վարժությունների կատարման համար տրվում է բառային նյութ՝ պարզ բառեր կամ բառարմատներ ու ածանցներ, և պահանջվում դրանց համադրումից նոր բառեր կազմել:

Դրա համար աշակերտները պետք է կարողանան ինքնուրույնաբար ընտրել այն բառերն ու ածանցները, որոնց միավորումից կարող են նոր բառ կազմել, որոշել, թե տարբեր արմատները միավորելու համար ո՛ր եղանակին դիմեն՝ բառերը պարզապես միացնելու՞, թե՞ դրանց միջև հոդակապ դնելու, ենթարկե՞ն որոշակի հնչյունափոխության, թե՞ ոչ:

Երկրորդ դասարանի <<Մայրենիում>> <<Բառակազմություն>> թեմայից համադրական վարժություններ կատարելով՝ աշակերտները սովորում են արմատ, ածանց, պարզ(բարդ, ածանցավոր, բարդ ածանցավոր) բառ լեզվական եզրույթները՝ հարստացնելով իրենց գիտական բառապաշարը, կարողանում են վերլուծել ու համադրել, բառերը տրոհել մասերի և այդ մասերով նոր բառեր կազմել:

Այսպիսի աշխատանքներ կատարելիս շատ են օգնում բառակազմություն թեմային վերաբերող թեմային վերաբերող խաղերը:

ԽՆՁՈՐ + ԵՆԻ = ԽՆՁՈՐԵՆԻ



Բառաստեղծման այս աշխատանքը ամրապնդելու համար կարելի է լեզվական խաղեր կազմակերպել: Ահա խաղ-մրցույթի վերածված վարժության արդյունքը երկրորդ դասարանում.տիրամայր,մայրենի, մայրական, անմայր, կնքամայր, գլխաշոր, գլխապտույտ,գլխաբաց, անգլուխ,տնական, անտուն տանտեր, տնակ,տնամերձ,տնային և այլն մայր,գլուխ, տուն արմատներով: Եթե քար բառով երեխան կարողանում է կազմել քարե, քարտաշ, քարքարոտ, քարայծ , բառերը, ուսուցիչն էլ կարող է ավելացնել քարաշեն քարեղեն, քարաժայռ,, քարհատ և այլ բառեր՝ բացատրելով կազմությունն ու իմաստը՝ պահանջելով գործածել նախադասության, խոսքի մեջ: Այսպիսով՝ ոչ գործուն բառապաշարից տասնյակ բառեր գործուն են դառնում: Վերլուծական տիպի վարժությունները ևս նպաստում են բառապաշարի հարստացմանը: Բառակազմական վերլուծության ենթարկելով բարդ ու ածանցավոր բառերը՝ ավելի մատչելի ենք դարձնում դրանց իմաստը, ամրապնդում լեզվական գիտելիքները: Վերլուծական վարժություններ են տրված երկրորդ դասարանի մայրենիում: Պահանջվում է ցույց տալ կամ գծիկով անջատել առաջադրված բառերի արմատները, առանձնացնել ածանցները, գտնել բարդ բառերի բաղադրիչները և դրանցով նոր բառեր կազմել, առանձնացնել հոդակապով ու անհոդակապ բառերը

և այլն: Բառակազմական վերլուծական վարժություններ կարելի է կատարել մայրենիի բոլոր թեմատիկ խմբերն անցնելիս:

Այս դեպքում երեխաներն ավելի լավ են յուրացնում բնագրից վերցրած նոր բառերը: Օրինակ՝ 2-րդ դասարանի մայրենիի մի քանի թեմատիկ խմբեր անցնում ենք <<Բառակազմություն>> թեմային զուգահեռ, և թեմատիկ խմբի յուրաքանչյուր բնագիր հնարավորություն ունի ամրապնդելու բառակազմական գիտելիքները՝ նպաստելով աշակերտի բառապաշարի հարստացմանը: Նման աշխատանք առաջադրում է նաև դասագիրքը (Ա. Քյուրքչյան, Լ. Տեր- Գրիգորյան) , օրինակ՝ ծաղկեփունջ բարդ բառը կազմված է ծաղիկ և փունջ պարզ բառերից՝ արմատներից: Բնագրից ընտրիր այդպիսի բառեր և գտիր դրանց բաղադրիչները: Երեխաները Անահիտ Պարսամյան Մարտի 8-ին բնագրից կարող են գտնել և գրել վարդագույն, փայլաթուղթ, բառերը և դրանք բաժանել բաղադրիչների: Այսպես, աշակերտը 2-րդ դասարանում տեսական ու գործնական որոշ գիտելիքներ ձեռք բերելով արմատի և ածանցի, բարդ ու ածանցավոր բառերի կազմության մասին՝ կարողանում է բառը բացատրել նաև բառակազմական վերլուծության միջոցով: Երբ երեխան սովորում է բառը տարրալուծել՝ գտնել արմատը, ածանցը և այդ բաղադրիչներով բառեր կազմել, զգալիորեն ընդլայնվում է նրա պասիվ բառապաշարը. նա կարողանում է նաև առանց ուրիշի օգնության կազմել նոր բառեր: Այդ բառաստեղծումն ուրախացնում է երեխային, և նա հետաքրքրությամբ է կատարում նման աշխատանքներ: Իսկ որտեղ կա հետաքրքրություն, այնտեղ զարգացումն ավելի հեշտ ու արագ է ընթանում:

Բառակազմական կաղապարներով համադրական տիպի վարժություններ կարող ենք կատարել նաև երրորդ և չորրորդ դասարաններում <<Խոսքի մասեր>> թեման անցնելիս: Բառապաշարի հարստացման տեսակետից մեծ դեր ունեն գոյականակերտ ածանցներով կատարվող վարժությունները: ՈՒսուցիչը կարող է ծանոթ ածականներից, դերանուններից համապատասխան վերացականգոյականներ կազմել տալ:

Գոյականակազմությունը կատարվում է ածանցմամբ, բարդությամբ, նայած թե նրա հիմքում բառակազմական ո՛ր տարրն է ընկած, տարբերում են՝ անվանակազմ գոյականներ, որոնք կազմվում են այլ գոյականներից դպիր-դպրոց, հուն-հնոց, ածականներից՝ հիվանդանոց, խաղաղություն, ուրախություն, թվականներից՝ եռյակ, քառյակ, հարյուրյակ, բայահիմքերից՝ փրկանք, լուծում, վազք, գալուստ, բնաձայնական գոյականներ՝ թրխկոց, չրխկոց, բզզոց: Այսպիսով, բառակազմական կաղապարների կիրառումը բառակազմության ուսուցման ընթացքում դասընթացի կարևորագույն բաղադրիչներից է, որը ուսուցիչը կարող է բավական հաջողությամբ զուգակցել բառակազմության ուսուցման այլ ձևերի հետ:

Ա.Քյուրքչյանի և Լ.Տեր-Գրիգորյանի «Աշխատի՛ր դասարանում 2» երկրորդ դասարանի տետրում տրվում է տեքստ և հանձնարարվում է ընթերցել ու դուրս գրել նույն արմատն ունեցող բառերը, նշել դրանց ընդհանուր արմատները:

Իսկ առաջադրանքի երկրորդ մասով առաջարկվում է փոխված արմատների դիմաց գրել դրանց չփոխված ձևերը: Օրինակ՝

փշիկ-փշոտ (փուշ),
ձյունոտ-ձյունե(ձյուն)

փայլիկներ-փայլուն(փայլ)

զարդարել-զարդարանքներ(զարդ)

Այս վարժության շնորհիվ երեխաների մոտ միաժամանակ զարգանում են բառակազմական կարողությունները, տրամաբանությունն է զարգանում և, վերջիվերջո, բառապաշարն է հարստանում: Այսպես, ածանցավոր և բարդ բառերի ուսուցման մեջ կարևորվում են դրանց իմաստների բառակազմակ

բացատրությունները և նման կարողության ձևավորումը. մի կողմից ուսուցանվում է բարդ բառերի կազմությունը այն բաղադրող արմատներով բացատրելը, մյուս կողմից՝ ածանցավոր կամ բարդ բառեր նման բացատրությունների միջոցով կազմելը:Օրինակ՝

+ Բարդ բառով ասա՛, թե ինչպես կարելի է անվանել՝

Մաքրություն սիրողին-**մաքրասեր**
Գիրք վաճառողին-**գրավաճառ**
Ձուկ որսացողին-**ձկնորս**
Քար տաշողին-**քարտաշ**
Հայրենիքը սիրողին-**հայրենասեր**

Արդյունքում երեխաները այդ բառակապկցությունները անվանում են մեկ բառով և սովորում են բառ կազմել իմաստային կաղապարով: Երկրորդ դասարանի տետրերում առկա են մի շարք վարժություններ, որոնք վերաբերվում են բառիմաստի բացատրությանը: Օրինակ՝ տրվում է բարդ բառերի շարք և առաջարկվում է տալ բացատրություն յուրաքանչյուր բառին.

մտրակաձև - մտրակի ձև ունեցող,
սարալանջ - սարի լանջ,
ծաղկաման - ծաղիկի աման, **ծաղկեփունջ** - ծաղիկների փունջ

+ Հետևյալ բառակապակցություններն ասա՛ բարդ կամ ածանցավոր բառերով և գրի՛ր.

գոհ չեղող- դժգոհ օգուտ չտվող- երեսի սրբիչ- զբոսնելու այգի- ընկույզի ծառ- կատակ սիրող-

Երեխաներին հանձնարարվում է բարդ բառերը բացատրել ըստ բաղադրիչ արմատների: Սա մի կողմից արմատները գտնելու, մյուս կողմից՝ բառերը բացատրելու կարողությունների ձևավորմանն ու կատարելագործմանն է ուղղված, ինչը մեծապես նպաստում է բառակազմական վերլուծություն կատարելու կարողությունների շնորհիվ և հիման վրա ինքնուրույնաբար հասկանալու անծանոթ բառերի իմաստները: Այսպիսով՝ «Բառակազմություն» թեմայի ուսուցումը հետապնդում է բառակազմական միջոցների ուսուցման և այդ հիմքի վրա նորանոր բառեր կազմելու և բառապաշարը հարստացնելու նպատակ:

Այդ բառաստեղծումը հնարավորություն է տալիս երեխաներին իրենց իմացած արմատների շրջանակներում կազմելու նոր բառեր, որի շնորհիվ նրանց համեմատաբար սահմանափակ բառապաշարը միանգամից բազմապատկվում է: Բառակազմության եղանակները յուրացնելով՝

երեխաներն ավելի գիտակցորեն են օգտագործում իրենց իմացած բառերը՝ դրանք տարբեր կապակցությունների մեջ դնելով և բոլորովին նոր բառեր ստանալով: Սա հսկայական առաջընթաց քայլ է բառապաշարի հարստացման և ընդհանրապես խոսքի զարգացման բնագավառում:

Պարզ, բարդ և ածանցավոր բառերի ուսուցումը բավականին բարդ թեմա է երեխաների ընկալումների շրջանակ ներմուծելու համար, գուցե դեռ վաղ: Այնուամենայնիվ, օգտագործելով խաղային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, հետաքրքրաշարժ լեզվատրամաբանական

առաջադրանքները, կհաջողվի այդ հասկացությունը այս կամ այն չափով դարձնել երեխաների սեփականությունը:

Դիտակտիկ խաղերը,ինչպես պնդում են հոգեբանները, խաղային գործունեության գլուխգործոցներն են: Դրանք միշտ հետաքրքրել են երեխաներին: Այդ ընթացքում երեխաները ցուցաբերել են իմացական և զգայական ակտիվություն: Խաղային

գործունեությունը խթանել է նրանց երևակայությունը,մտածողությունը, խոսքը, զգացմունքները, ամրակայվել է հիշողությունը:

Բացի դրանից, խաղային իրավիճակը նպաստում է որ մասնակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն միմյանց հետ:

Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր <<դերը>> և ամբողջովին պատասխանատվություն է կրում դրա համար:Սա է խաղի դաստիարակչական նշանակությունը:Այս իմաստով հատկապես առանձնանում են դերային խաղերը, որոնց ընթացքում երեխան ընդունում է որևէ սոցիալական դեր:

Նա ապրում է մի իրավիճակ, որը չի եղել իր կյանքի ընթացքում, և դա դաստիարակում է նրան, սովորեցնում է ապրել հասարակական կյանքով: Առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը,եթե բառակազմական գիտելիքների կրկնությունը իրականացվի <<Բարձունքի նվաճումը>> խաղի տեսքով: Գրատախտակի մոտ են հրավիրվում թիմերի

մասնակիցները, որոնք ճիշտ գտնելով բարդ և ածանցավոր բառերը, բարձրանում են բուրգի աստիճաններով, որը նկարված է գրատախտակին: Կհաղթի այն թիմը, որը

ճիշտ կգտնի բառերը և ավելի արագ կնվաճի բարձունքը:

Խաղը ակտիվացնում է ուսումնական ամբողջ գործընթացը: Այլ կերպ՝ ակտիվ ուսուցումը ենթադրում է ոչ միայն ուսուցչի ակտիվ դեր, այլև աշակերտի ակտիվություն, ուսումնական գործում փոխհարաբերություններ և ակտիվ մթնոլորտ: Գրեթե անհնար է իրականացնել ակտիվ ուսուցում-ուսումնառություն՝ առանց խաղի, իսկ առանց ակտիվ ուսուցման՝ անհնար է հասնել արդի կրթական նպատակներին:

Խաղի նշանակության մասին հայ մեծ բանաստեղծ Թումանյանը գրել է.<<Խաղը մանուկ մարդու

բնական օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է:Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն

բան, ինչ որ նրան տրվում է խաղով,ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու,առանց հոգնելու>>:

Բարձր գնահատելով խաղի նշանակությունը՝Վ. Ա.

Սուխոմլինսկին գրում է.<< Առանց խաղի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում: Խաղը մի հսկա,

լուսավոր պատուհան է, որով երեխայի հոգեկան աշխարհին է լցվում շրջակա աշխարհի մասին

հասկացությունների, պատկերացումների կենդանի հեղեղը: Խաղը կայծ է, որ

ՕրվաԴասի պլան

Առարկա-Մայրենի
Դասարան-2-րդ
Դասի թեման-<<Խաղաղության դասը>>Սուրեն Մուրադյան:Առարկա,գործողություն,հատկանիշ ցույց տվող բառեր
Տիպը-Հաղորդման դաս
Նպատակը- Ինչ է խաղաղությունը
Սովորեն այդ բառի հոմանիշները,բացատրությունը
Կարողանան տարբերակել առարկա,գործողություն ,հատկանիշ ցույց տվող բառերը
Կազմեն նախադասություններ այդ բառերով

Խնդիրներ Սովորեն և ծանոթանան խաղաղության խորհրդանշանների հետ
Կարողանան արտահայտիչ կարդալ և կարդացածը վերլուծել:
Սովորեն ասույթներ խաղաղության մասին

Ուսումնական պարագաներ-Դասագիրք,խաղաղության խորհրդանշաններ,նկարներ,քարտեր,տետրեր,մատիտներ,թղթեր,երաժշտություն,տեսանյութ:
Մեթոդական հնարներ-Զրույց,մտագրոհ(խթանման փուլ),քառաբաժան (կշռադատման փուլ) ,խաղային մեթոդներ
Խթանման փուլ-Զրույց՝ անրադարձ նախորդ դասերին,պատերազմ բառի հականիշը գտնել:Բացատրել այդ բառի մաստը,ասել հոմանիշները,ասել մեկ բառով,թե ի՞նչ է ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ:

Խոսել խորհրդանշանների մասին.

_Աղավնի-բանաստեղծություն

Տեսանյութ.

_Ձիթենու ճյուղ

_Մատներով նշանը

_N և D տառերի համադրում, որը նշանակում է միջուկային զինադադար, կամ աղավնու ոտնաթաթ

Իմաստի ընկալում-Ոտանավոր խաղաղության մասնին

Ասույթներ խաղաղության մասին

Պիկասոյ <<Խաղաղության աղավնի>> կտավը

Բացել դասագրքերը, հիշել հեղինակին, խոսել նրա մասին, հիշել անցած ստեղծագործությունները:

Ընթերցել Սուրեն Մուրադյան՝ <<Խաղաղության դասը>>

2-րդ անգամ կարդում են աշակերտները մաս-մաս և վերլուծում:
Բացատրվում են անծանոթ բառերը, գրում են բառատետրում

Ֆիզկուլտ դադար-Երգում են <<Խաղաղություն>>երգը

Խմբային աշխատանք-Բաժանվում են քարտեր, որտեղ ասույթները խառնվել են, պետք է գտնել, կարդալ և բացատրել:

Խաղ-1-ին շարքը ասում է առարկա ցույց տվող բառեր

2-րդ շարքը ասում է այդ առարկայի հատկանիշը

3-րդ շարքը ասում է այդ առարկայի կատարած
գործողությունն այնպես,որ միտք արտահայտի և դառնա նախադասություն:

Կշռադատման փուլ-Անդրադարձ կատարել խթանման փուլում գրված բառերին, ավելացնել սովորած պատկերներն ու բառերը: Քառաբաժան մեթոդով գրել.

Ի՞նչ գիտեի:	Ի՞նչ սովորեցի:
Ի՞նչ տեսա:	Ի՞նչ լսեցի:

Գնահատել ընթերցանության համար:

Եզրակացություն

Ամփոփելով ավարտական աշխատանքում իմ կողմից ներկայացված տեսական ու գործնական նյութը՝ եկել եմ մի շարք եզրահանգումների, մասնավորապես.Բառակազմության ուսուցումը երկրորդ դասարանում մեծապես նպաստում է աշակերտի ակտիվ և պասիվ բառապաշարի հարստացմանը, սակայն ցանկալի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է լավ ուսումնասիրել դասագրքերի ընձեռած հնարավորությունները, մշակել վարժությունների և առաջադրանքների ամբողջական համակարգ, մեծ տեղ հատկացնել խաղ-առաջադրանքների, անհատական մոտեցում ցուցաբերել աշակերտների նկատմամբ, ապահովել աշխատանքի անհրաժեշտ պայմանները և այլն: Բառակազմության ուսուցումը նպաստում է երեխայի լեզվամտածողության ձևավորմանը, զարգացնում է տրամաբանությունը: Կատարված աշխատանքի արդյունքում հանգել եմ հետևյալ եզրակացություններին՝ բառակազմության ուսուցումը բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման կարևոր միջոց է. բառակազմական վերլուծությունը, բառակազմական միավորների ուսուցումը խաղի միջոցով, բառակազմական կաղապարների գործածությունը կարևոր դեր են կատարում բառիմաստի ընկալման և բառեր կազմելու կարողությունների ձևավորման վրա՝ երկրորդաբար դառնալով բառապաշարի հարստացման հիմք. բառապաշարի ուսուցման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել բառիմաստը բառի բաղադրիչներով բացատրելու վարժություններին. դրանք ոչ միայն սովորեցնում են բառիմաստն ինքնուրույն բացատրել, այլև հիմք են հանդիսանում բառաստեղծման աշխատանքների համար. բառապաշարի հարստացման գործընթացում կարևորագույն փուլ է համարվում բառի շարահյուսական գործածությունը. այն նպաստում է բառը խոսքում կիրառելու կարողությունների ձևավորմանը, ինչը բառը ակտիվ բառապաշար ներմուծելու համար պարտադիր պայման է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, 418 էջ:

Ավագյան Վ., Բառագիտության ուսուցումը դպրոցում, Եր., <<Լույս>>, 1989:

Բալայան Ա., Մայրենի լեզվի դասերին կիրառվող մեթոդների ընտրության հարցի շուրջ, Նախաշավիղ, 2007:

Գալստյան Ա., Խարազյան Ռ., Բալայան Ա., Հայոց լեզվի հարցարանների ժողովածու, Եր., Էդիթ Պրինտ, 2009:

Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Գիրք-տետր 1, Եր., Էդիթ Պրինտ, 2009:

Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Գիրք-տետր 2, Եր., Էդիտ Պրինտ, 2009:

Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր 2, Եր., Էդիտ Պրինտ, 2009:

Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր.,

<<Զանգակ-97>>, 2009, 352 էջ:

Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Եր., <<Լույս>>, 1998:

Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Եր. 2009,<<Զանգակ-97>>,2009, 79 էջ:

Գյուլամիրյան Ջ., <<Զանգակ>> այբբենարանի մեթոդական ուղեցույց, Եր.

<<Զանգակ-97>>, 2003:

Գյուլամիրյան Ջ., Գրական ստեղծագործությունների ընկալման մեթոդիկայի առանցքային խնդիրները տարրական դասարաններում, <<Մանկական միտք>>, 2001, թիվ 2.4: